

Անդրկովկասի քաղաքակրթութեան դոր-
ժում պատկանելի դեր է կատարել Լա-
զարեան ձեմարանը, վկայում է Լ. Մանուէ-
լեանը «Ռուսահայ գրականութեան պատմու-
թեան» մէջ: — «Դորպատի նման մի մտաւոր
կենդան էր Լազարեան ձեմարանը, որ տեղ
40ական թուականներին թագաւորում էր
«Հայկական ոգին» եւ մշակում էր աշխար-
հիկ լեզուն»: «Լազարեան ձեմարանն էր
գրեթէ բացառապէս մատակարարում ընտիր
ուսանողներ Դորպատի համալսարանին»⁸:

Լէօն իր «Պատմութիւն Երեւանի քեմա-
կան դպրոցի» մէջ, մատնանշում է Լազա-
րեան ձեմարանի մի այլ մեծ ծառայութեան
վրայ, որ նա կատարել է հայ դպրոցի եւ հայ
մշակութային կեանքի մէջ:

«Եթէ մենք, Ռուսահայերս կարող ենք
ցոյց տալ, որ 19րդ դարի համարեա երկրորդ
տասնամեակից մեզանում սկսում են դասա-
գրքեր կազմել⁹, այս բանը մենք պարտական
ենք այն հզոր դրդիչներին, որոնք հէնց այդ
ժամանակներից էլ առաջ եկան մեր կեանքի
մէջ: Յայտնի է, որ իրերի կարգի մէջ ան-
խուսափելին է պահանջ եւ բաւարարութիւն:
Առաջին հզոր պահանջը ծնեցնում էր հայ-
կական առաջին բարեկարգ դպրոցը — Լա-
զարեան ձեմարանը: Պահանջ առաջարկելու
հետ նա կարողութիւն ունէր եւ բաւարարու-
թիւն տալու այդ պահանջին, քանի որ ապա-
հովում զպրոց էր, քանի որ նրան կեանք
տուած եւ նրան կառավարող մեկենասները,
չնորհիւ հէնց իրանց մեծ հարստութիւնների
եւ իշխանական ձգտումների, մեծ ոյժ էին
հանդիսանում հայութեան համար թէ քաղա-
քական եւ թէ մտաւոր ասպարէզներում:
Լազարեանների տունը, անկասկած, մի խո-
չոր կուրտուրական կենտրոն էր մանաւանդ
այն ժամանակ, երբ հայութիւնը խորասու-
զում էր սոցիալութեան խաւարի մէջ: Լա-
զարեան ձեմարանը ուսում էր տալիս հայ
երեխաներին եւ այդ դործը հեշտացնելու հա-
մար տալիս էր եւ դասագրքեր, որոնք ար-
դէն բոլոր հայ դպրոցներին էին հարկաւոր:
Մոսկվան, գլխաւորապէս շնորհիւ այդ հիմ-
նարկութեան, դառնում է Ռուսահայերի
մտաւոր կենտրոնը, ամենաառաջաւորը եւ ա-

⁸ Տե՛ս Լեւոն Մանուէլեան, Ռուսահայ գրակա-
նութեան պատմութիւն, Հատոր Ա, Բ, Գ եւ Դ, 1909:
⁹ Մեր խօսքը, ստում է Լէօն Մանուէլեան մէջ,
նոր դասագրքերի մասին է եւ մենք նկատի չունենք
հին աւանդական դասագրքերը, Այբբենարան, Սաղ-
մոս Եւայն»:

մեմառանդունը ռուսահայ գաղութների մէջ,
ուր համախմբում է հայ մտաւորականու-
թիւնը եւ հաստատում է հայ գրականու-
թեան եւ գիտութեան բարձր ներկայացուց-
չութիւնը: — Այս դերի մէջ Մոսկվան մնում
է մինչեւ 60ական թուականների երկրորդ
կէսը եւ այդ ժամանակամիջոցում էլ հայ
դասագրքերի մեծագոյն մասը կապ ունէին
ձեմարանի հետ թէ իրրեւ դասատուներ եւ
թէ իրրեւ աշակերտներ¹⁰:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնելու լի-
նինք այն անտխտելի փաստը, որ Լազարեան
ձեմարանն ու Լազարեաններն իրենց բեղուն
բազմաճիւղ դործունէութեամբ եղան այն
ամուր պատուանդանը, որի վրայ կառու-
ցուեց 50ական-60ական թուականների մեր
Վերածնունդի շքեղ շէնքը, — մենք, ան-
շուշտ, արձանագրած կը լինենք մի պատմա-
կան ճշմարտութիւն, սակայն ո՛չ լրիւ, քան-
զի Լազարեան ձեմարանը այնուհետեւ էլ՝
իր գոյութեան երկրորդ յիսունամեակում,
չարունակել է իր մշակութային եւ հասարա-
կական մեծ դերը կատարել բովանդակ
հայութեան մէջ եւ հայութեան համար: Ան-
հնարին է չափ ու կշիռ դանել այն անաս-
ման օգուտների, որ նա բերել է իր հարիւ-
րամեայ գոյութեան ընթացքին:

Չնայած որ Լազարեան ձեմարանը
1918 թ. աշնանից սկսած գոյութիւն չունի,
այսու հանդերձ մեր ազգային կեանքի բոլոր
մարդերում դեռ այսօր էլ գործում են բազ-
մաթիւ ձեմարանաւարտներ: Այն սերմերը,
որ նա ցանել է աւատօրէն հայ կեանքի, հայ
մշակոյթի անդաստանում, տուել են ու տա-
լիս են դեռ իրենց բազմաբղիւն պտուղները:

Անկեղծ ու ջերմ յարգանքի, պատկա-
ռանքի ու երախտագիտութեան խօսք ունին
ասելու ներկայ ու դալոց սերունդները Լա-
զարեան շքեղ տոհմին ու Լազարեան ձեմա-
րանին:

Նախ քան եզրափակելը մեր խօսքը այս
համառօտ պատմական տեսութեան մէջ,
պարզարանենք մի խնդիր եւս, որ ժամանա-
կին գրողները էլ հայ հասարակութեան
միտքը եւ կարող է այսօր եւս յարուցուել ու
տարակուսանքների ու թիւր կարծիքների
տեղիք տալ: Այդ խնդիրը հետեւեալն է.

¹⁰ Տե՛ս Լէօ, «Երեւանի թեմ. դպր. պատմ.»,
էջ 227—228:

Ինչո՞ւ համար Լազարեաններն իրենց
դպրոցի համար ընտրեցին Մոսկուան, որ
այնքա՛ն հեռու էր հայկական շրջաններից
եւ ոչ թէ, օրինակ, Թիֆլիսը կամ Եջմիա-
ծիւնը:

Ժամանակին այս հարցումի պատաս-
խանը տուել է Լազարեան ձեմարանի տեսուչ
Գէորգ Քանանեանը եւ վերջ տուել բոլոր
տարակուսանքներին եւ առարկութիւններին,
իսկ ժամանակն ու կեանքը եկան փայլուն
կերպով ապացուցելու, որ ձեմարանի հիմ-
նադիրներն եղել են չափազանց իրատես ու
հեռատես իրենց որոշման մէջ, եւ չեն սխա-
լուել ընտրելով Մոսկուան որպէս վայր իրենց
դպրոցի համար:

— «Կեանք տալով այս դպրոցին, ասել
էր Գ. Քանանեանը վերը յիշուած իր ճառի
մէջ ձեմարանի 50ամեակի առթիւ (էջ 17—
18), նրա հիմնադիր Յովհաննէս Լազարեանն
ու նրա կազմակերպիչ Յովակիմ Լազարեանն
ի նկատի ունէին թէ եւ մի համեստ, բայց շատ
պարզ ու յստակ կերպով գիտակցուած ու
միանգամայն արդիւնաշատ նպատակ: Կամե-
նայով բաւարարել Ռուսաստանում ապրող
հայ ազգայնակութեան կենսական պահան-
ջին, նրանք ուզում էին նուիրել իրենց հայ-
րենակիցներին մի դպրոց, ուր նրանց երե-
խաները կարողանային ստանալ սկզբնական
ընդհանուր կրթութիւն, որից յետոյ, ստա-
նալով անհրաժեշտ մտաւոր զարգացում ու
բարոյական դաստիարակութիւն, ի վիճակի
լինէին ժամանակի ընթացքում լինել օգտա-
ւէտ քաղաքացիներ հասարակութեան ու
պետութեան համար: Պէտք է նկատել նաեւ,
պետութեան համար: Պէտք է նկատել նաեւ,
որ տեղի ընտրութեան խնդրում իրենց դպրո-
ցական հաստատութեան համար, նրանք ա-
ռաջնորդուել են նոյնքան ողջամիտ ու ճշմա-
րապարտութեան բոլոր միւս վայրերից: Մոս-
կուայի թեմական դպրոցի հարապատակ
կուան, ներկայացնելով բազում նպատակներ
պայմաններ, հաւասարապէս բաւարարում էր
ձեմարանը, հաւասարապէս պահանջներին: Հա-
մարում անոց դպրոցի պահանջներին: Հա-
մարում կառուցելու, որ սխալ էր համարում
կառուցելու պարտիքի, որ սխալ էր համարում
հե-
հիմնադիրների միտքը՝ հիմնել դպրոց հե-
ռու հայ ժողովրդի բնակավայրերից, մեմֆ
ու հայ ժողովրդի բնակավայրերից, մեմֆ
ընդհակառակը համարում եմֆ վայրի ըն-
տրութեան մէջ ամենաերջանիկ ու էական
տրութեան մէջ ամենաերջանիկ ու բարգաւա-
նական նրա կայունութեան ու բարգաւա-
նական: Եթէ այդ պահանջը ներկայ ժամանակ-
ներում կարող էր ունենալ բանաւոր հի-
մունքներ, նա բոլորովին ընդունելի չէ մի

կրթական հաստատութեան համար 50 տարի
առաջուայ պայմաններում: Եթէ չխօսենք այն
հանգամանքի մասին, որ հիմնադիրներն ու
հետագայ բոլոր հոգարարները Լազա-
րեան տոհմից անմիջականօրէն մասնակցում
էին դպրոցի ընթացիկ կեանքի կարգաւոր-
ման մէջ, մի մասնակցութիւն, որ կենարար
կերպով ազդում էր նրա յաջող ընթացքի
վրայ, կային բազմաթիւ մղիչ պատճառներ
ընտրելու Մոսկուան:

«Այն քաղաքները, ուր Հայերը կազմում
էին շօշափելի թիւ, գտնուած էին Կովկա-
սում եւ Անդրկովկասում, ուր այդ ժամա-
նակ տիրում էր կատարեալ քառասական վի-
ճակ, մի հանգամանք, որ չէր կարող նպաս-
տել դպրոցի կանոնաւոր զարգացման ու բար-
գաւաճման: Մինչդեռ Մոսկուան միանգա-
մից բաւարարում էր դպրոցի բոլոր պահանջ-
ներին: Այստեղ վաղուց ի վեր գոյութիւն
ունէր հայկական գաղութ. Մոսկուան, որ-
պէս առեւտրական կենտրոն, անընդհատ
գրաւում էր նորանոր հայ եկեւորներ: Բաց ի
այդ, որպէս ուստական կրթական կենտրոն,
իր հոշակաւոր համալսարանով, տրամա-
գրում էր բոլոր այն միջոցներն ու առաւե-
լութիւնները, որոնք անհրաժեշտ են ամէն
մի դպրոցի յաջող զարգացման համար: Լա-
զարեան ձեմարանը Մոսկուայում ընձեռնում
էր իր սաներին նաեւ մի այլ անգնահատելի
պայման՝ ծանօթացնում էր նրանց լեզուի,
կեանքի ու բարքերի հետ այն հասարակու-
թեան ու պետութեան, որի քաղաքացիները
նրանք պիտի լինէին ապագայում»:

Թէ եւ այս մէջըրբումի մէջ Գ. Քանանեանը
սպասիչ կերպով լուծում է խնդիրը, այսու-
հանդերձ նրա բերած նկատաւորները շեշ-
տուած են շատ ընդհանուր գծերով եւ բացի
այդ նկատի չի առնուած հիւս. Կովկասում,
Կովկասում եւ Անդրկովկասում բացուած
հայ դպրոցների կեանքն ու վիճակը:

Եթէ մի վայրկեան նկատի առնելու լի-
նենք նաեւ այդ հանգամանքները, չենք կա-
րող չընդունիլ, որ 19րդ դարի ոչ միայն
սկզբում, այլ եւ հետագայում, ասելի ու ժա-
մանակներում գոյութիւն չունէին հայ կեանքի
մէջ նպատակաւոր պայմաններ մի դպրոցի
յաջող զարգացման ու անխախտ յառաջադի-
մութեան համար:

Ամենից առաջ, երբ 1815 թ. Լազարեան
ձեմարանի հիմը դրուեց, Անդրկովկասն
գտնուած էր Պարսից իշխանութեան ներքոյ,
4

որ արդէն ինքնին անհնարին էր դարձնում կանոնաւոր կրթական գործ վարելը:

Վրաստանը, ճիշտ է, որ 1801 թ. միացուեց Ռուսաստանին, այսուհանդերձ այնտեղ էլ դեռ եւս չկար որեւէ արհեստավարներ:

Անգամ Ռուսաստանի հարաւում 19րդ դարի առաջի կէսին հիմնուած դպրոցները չունեցան այն յարատեւութիւնն ու յաջողութիւնը, որ ունեցաւ Լազարեան ձեմարանը:

Ի՞նչ վիճակում էին եւ ի՞նչ ճակատագիր ունեցան, օրինակ, Նոր-Նախիջևանի դպրոցը, որ հիմնել էր Յովսէփ արքեպ. Արղութեանը եւ հետագայում Գարբէլէ քահ. Պատկանեանի ուսումնարանը նոյն Նոր-Նախիջևանում, բացուած 40ական թուականներին. կամ Ս. Սաշի տպարանն ու դպրոցը նոյն Յովս. արքեպ. Արղութեանի կողմից ծնունդ առած. կամ Աստրախանի Ազարաբեանների դպրոցը, բացուած 19րդ դարի առաջին տասնամեակում եւ, վերջապէս, Թէոփոսի Սալիպեան ուսումնարանը, որի հիմը դրել էր Գարբէլէ արքեպ. Ալվազեանը 1858 թ. եւ որը փակուեց արդէն 1871 թուին...:

Ի հարկէ, չի կարելի ժխտել, որ այդ դպրոցները ժամանակին բերել են մեծ օգուտներ հայ մատաղ սերունդի կրթութեան գործին եւ առ հասարակ մեր ազգային մշակոյթին, բայց եւ չի կարելի չխոստովանել, որ նրանք չարդարացրին այն բոլոր յոյսերն եւ ակնկալութիւնները, որոնք կապուած էին այդ դպրոցների հետ եւ որ նրանց կրթական գերը եղաւ շատ սահմանափակ:

Այնուհետեւ գալով Անդրկովկասի մեր թեմական դպրոցներին, մենք կը տեսնենք, որ նրանք եւս չափազանց աննախանձելի վիճակ են ունեցել:

Այ. Երեցեանն ու Ստ. Մալխասեանը իրենց Ներսիսեան դպրոցի պատմութեամբ եւ Լէօն Երեւանի թեմական դպրոցի պատմութեամբ ցուցադրում են նրանց կեանքի մի պատկեր, որ խորապէս յուզիչ է...: Ի՞նչ տառապանքների, ի՞նչ զրկանքների, ի՞նչ ներքին ու արտաքին ցնցումների են ենթարկուած եղել նրանք իրենց ծննդեան օրից իսկ սկսած:

Ներքին անվերջ խռովութիւնները արգելք են եղել յարատեւ բնականոն կրթական կեանք ստեղծելուն այդ դպրոցներում...: Մի ներքին տագնապ յաջորդել է միւսին...:

Հողարարձութիւնների ու տեսուչների շարունակական ընդհարումներն ու պայքարները, որոնց հետեւանքով կրթական գործի պատասխանատու վարիչ-տեսուչները արագօրէն փոփոխուել են, հոգեւոր իշխանութեան եւ ապա ուսու բիւրոկրատիայի անտեղի ու բռնադրօսիկ միջամտութիւնները, աշակերտութեան բմբուսութիւնները տեսուչների եւ ուսուցիչների դէմ՝ անընդհատ խախտել են դպրոցի խաղաղ կեանքը, իսկ երբեմն էլ պատճառ եղել դպրոցի փակման տարիների ընթացքում...:

Լէօնի կարծիքով մեր թեմական դպրոցների տխուր վիճակի գլխաւոր պատճառը եղել է այն հանգամանքը, որ նրանք ծնունդ են եղել 1836 թ. «Պոլոթենիայի», իսկ այդ Պոլոթենեան «բացարձակապէս հոգեւորականութեան ձեռքն էր տուել Ռուսահայոց ազգային դաստիարակութիւնը եւ հայ հոգեւորականութիւնը հարիւրաւոր փաստերով ցոյց էր տալիս թէ որքան անօգնական եւ անկարող է նա այդ գերի մէջ»:

Արդ Լազարեանները, հիմնելով իրենց դպրոցը Մոսկուայում, ցանկացել էին խուսափել հէնց այդ հոգեւորականութեան միջամտութիւնից: Նրանք շատ լաւ ծանօթ էին¹¹, թէ ինչ է կատարուում Ս. Էջմիածնում 18րդ դարի վերջերքին, ինչքան անպահապօք էր Ս. Էջմիածնի վիճակը, նրանք գտնուում էին Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսների կուռի տխուր օրերի ծանր տպաւորութեան տակ եւ հոգեպէս տառապում էին, տեսնելով թէ որքան մեծ փրկանք է կրում ազգն ու իրենց պաշտած հայ եկեղեցին...:

Եւ նրանք կամեցան միանգամայն գերծ պահել իրենց դպրոցը ամէն կողմնակի միջամտութիւնից, կամեցան միշտ իրենց աչքի առաջ ունենալ այն, վարել դպրոցական գործը իրենց հասկացողութեամբ, որը շատ աւելի բարձր էր, քան այն ժամանակի հայ կղերի կրթական գործի բմբուսումները: Եւ նրանք, իրօք, դրին ձեմարանի կրթական գործը այնպիսի բարձր մակարդակի վրայ, որ դարձաւ մի առաջնակարգ դպրոց նոյն իսկ

¹¹ Յայտնի է, որ Լազարեանները սերտ կապ էին պահպանում Ս. Էջմիածնի հետ եւ գտնուում էին մշտական թղթակցութեան մէջ: Այդ թղթակցութիւնից երևում է, որ նրանք լուսատեղեակ էին Ս. Էջմիածնի գործերի ու վիճակի մասին: Նրանց նամակների մի մասը մի փոքր մասն է, որ հրատարակուած են Ա. Երեցեանի «Կովկասահայք»ում եւ Գրիւտ աւ. քահ. Աղա՛նեանի «Դիւան Հայոց պատմութեան» մէջ:

ուսական դպրոցների շարքում. նրանք կամեցան ապահովել նրա իրաւական վիճակը, այնպէս, որ նա գերծ մնայ պատահականութիւններից ու ամէն կարգի ցնցումներից: Այս նպատակով տասնեակ տարիների ընթացքում նրանք մեծ ջանք թափեցին, մինչեւ որ հասան իրենց նպատակին ու տուին ձեմարանին հաստատուն դպրոցական ծրագիր եւ վարչական կանոնագիր, հաստատուած կառավարական բարձրագոյն իշխանութեան կողմից. վերջապէս, նրանք կամեցան պահել ձեմարանը իրենց անմիջական հսկողութեան տակ, որպէս զի կարողանան միշտ վերահասու լինել նրա կարիքներին ու պահանջներին: Եւ իրօք նրանք գուրդուում ու խնամում էին ձեմարանը որպէս մայրը իր որդուն, եւ անընդհատ մեծ գումարներ էին նուիրաբերում ձեմարանին լրացնելու նրա պահանջները, բաւարարելու նրա պահանջներին: Ո՞ւմ կարող էին նրանք վստահել այդ խոշոր գումարները, եթէ ձեմարանը հիմնուած լինէր Կովկասում կամ Անդրկովկասում:

Չէ՛, Լազարեանները իրենց պայծառատեսութեան ու իրատեսութեան մէջ չէին վրիպել, ընտրելով Մոսկուան, որպէս ձեմարանի վայր: Եւ կեանքն ու պատմութիւնը լիովին արդարացրին այդ ընտրութիւնը:

(Շարունակելի):

ՓՐԵՆՔՑ ՆԸՄՐԻ ՓԵՃԸ
Բ. ԿՈՒՍԵԿԵԼ ԼԻՔԵՆԵՆԻ
(1868—1873)
ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅ

60ական թուականներուն թուրք պետական պաշտօնէութեան մէջ կը գտնուէին կարգ մը Հայեր, որոնց անունէն կամ մակահունէն դատելով կարելի էր կուսակցութիւնը հարձակուել: Այսպէս՝ Եւթէր, Ֆայրի, Արգուման, Տաւուս Փաշա, Ապուլլահ, Ալթուն Տիւրքի եւն եւն: Եւ սակայն ասոնք ամէնքն ալ ազգով հայ եւ բարձր պաշտօններ կը վարէին թուրք կայսերական պետութեան մէջ:

Տարակոյս չկայ թէ ժամանակակիցներուն ծանօթ էին անոնք եւ ոմանք ճանչցուած իրրեւ հայ: Բայց անոնցմէ ոմանք, ինչպէս նաեւ ուրիշներ իրենց անուան անսովոր ձեւին պատճառաւ ընդհանրապէս անծանօթ մնացած եւ մեր ազգայիններէն իրրեւ հայազգի չէին ճանչցուած:

Այդ շրջաններուն սովորական բան մըն էր, նոյն իսկ եւրոպացիներուն համար, որոնք իրենց եւրոպական անունը թրքականի մը հետ փոխանակելով՝ կը դառնային բոլորովին անծանօթ անձ մը: Ո՞վ կրնար կուսակցութիւնը իրրոքը կուսակալ Բիւքիս Փաշա, որ ատեն մը թուրք համարուեր (Փուլնջ, Կ. Պ. 1873, Թ. 778), յետոյ հայ կարծուեր (անդ՝ 1874, Թ. 917) էր՝ իտալացի եղած ըլլայ ծնունդով (անդ՝ 1874, Թ. 921):

Այս տեսակէտով հետաքրքրական է պարագան Լիւանանի երկրորդ կուսակալ եւ ընդհանուր կառավարիչ Ֆրանքո Փաշայի եւս, որուն անուան ձեւը — Ֆրանկո Նասրի Փաշա — պատճառ դարձած է իր ազգային ծագումի վրայ մթութեան քող մը ձգելու: Յետագայ գրութիւնս նուիրուած է լուսարանելու իր կեանքը, գործունէութիւնը եւ ազգային ծագումը:

Ա.
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳՇԵՐ

Ֆրանքո Նասրի Փաշայի ծնողքը Հալէպի են. ծնած է Կ. Պոլիս 1813ին (Մանգուլէի Էֆեար, Կ. Պ. 1873, Թ. 2102): Փուլնջի համեմատ (1873, Թ. 778) Սուրիա ծնած՝ յետոյ Պոլիս եկած է: Թէ ի՞նչ կրթութիւն առած է՝ անծանօթ կը մնայ: Նախ վաճառականի մը քով մտած է իրրեւ սպասաւոր (Փուլնջ, անդ): Յետոյ երիտասարդ հասակէն թուրք պետական ծառայութեան մէջ մտնելով՝ կարճ ժամանակէն սասիճանաբար բարձրացած է՝ վարելով կարգ մը պատասխանատու պաշտօններ, ինչպէս վիճարանական դրասենեակի սնորէնութիւն, խարիճիքեակի վարչութիւն, Բէյրութի մաքսատան տեսչութիւն եւն:

1860ի Լիւանանի խռովութենէն վերջ՝ կայսերական լիազօր Ֆուադ Փաշայի կրնկերանայ գէպի Բէյրութ իրրեւ անդամ յատուկ Քնիւիջ Յանձնախումբի՝ իրեն յանձնուած գլխաւորաբար Օղնութեան Գործի կազմակերպութիւնը: